

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Առգե Բիզնես» ՍՊԸ մասնակիցներին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Առգե Բիզնես» ՍՊԸ (Ընկերություն) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվությունը

Ընկերության տնօրինությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանում, կիրառում և պահպանում, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրություն և կիրառում, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարում:

Աուդիտորի պատասխանատվություն

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոնները, աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռքբերելու նպատակով ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմելու և

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազ. Դրամ	Ծա- նոթ.	2013թ.	2012թ.
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	1	498,015	529,291
Ոչ նյութական ակտիվներ	2	35,473	1,181
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	3	10,000	20,000
Հետաձգված հարկային ակտիվներ		-	193
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		2,791	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		546,279	550,665
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	4	1,411,677	1,133,007
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	5	1,736,401	1,326,544
Ընթացիկ հարկային ակտիվներ շահութահարկի գծով		-	59,129
Ընթացիկ ֆինանսական ակտիվներ		22,927	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	6	15,203	236,658
Այլ ընթացիկ ակտիվներ		20,467	48,394
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		3,206,675	2,803,732
Ընդամենը ակտիվներ		3,752,954	3,354,397

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են՝ 15/02/2014թ

Տնօրեն
 Ս. Ամիգյան

Գլխ. հաշվապահ
 Ա. Ղազարյան



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(շարունակություն)


Հազ. Դրամ

	Ծա- նոթ.	2013թ.	2012թ.
<i>Խեփական կապիտալ և պարտավորություններ</i>			
Բաժնետիրական կապիտալ	7	240,729	240,729
Ծերացնահատումից պահուստ		-	-
Կուտակված շահույթ		1,237,950	481,038
Ժահուստային կապիտալ		-	-
Խեփական կապիտալի այլ տարեր		-	-
Ընդամենը սեփական կապիտալ		1,478,679	721,767
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ		-	-
Հետաձգված հարկային պարտավորություն		-	-
Այլ ոչ ընթացիկ պարտավորություն		-	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		-	-
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ	8	580,437	461,807
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	9	1,617,592	2,120,698
Ընթացիկ պարտավորություններ շահութահարկի գծով		50,772	-
Պահուստներ այլ պարտավորություններ		25,475	50,125
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		2,274,275	2,632,630
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		3,752,954	3,354,397

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են՝ 15/02/2014թ

Տնօրեն

Ս. Ամիգյան



Գլխ. հաշվապահ

Ս. Մազարյան

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազ. Դրամ		2013թ.	2012թ.
	Ծանոթ.		
Հասույթ	11	12,814,008	12,162,330
Վաճառքի ինքնարժեք	12	(10,619,195)	10,359,443
Համախառն շահույթ		2,194,813	1,802,887
Այլ եկամուտներ		218,098	129,565
Իրացման ծախսեր		(772,164)	(780,895)
Վարչական ծախսեր	13	(356,850)	(357,770)
Այլ ծախսեր		(45,844)	(48,885)
Գործառնական գործունեությունից շահույթ		1,238,053	744,902
Ֆինանսական ծախսեր		(23,986)	99,113
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)		(214,754)	
Շահույթ մինչև հարկերը		999,313	645,789
Շահութահարկի զծով ծախս (փոխհատուցում)	14	(242,401)	(164,751)
Տարվա շահույթ		756,912	481,038
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Ընդամենը համապարփակ արդյունք		756,912	481,038

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 15/02/2014թ

Տնօրեն Ս. Ամիրջանյան
 Գլխավոր հաշվապահ Ա. Գալստյան

Ամբողջությամբ հաստատված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը: